Խմբագրություն՝ *5*
Վերջին փոփոխության ամսաթիվ՝ *10.04.2024*

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից որպես արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի հաշվի օպերատոր մատուցվող ծառայությունների սակագներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն սակագները (այսուհետ՝ Սակագներ) գանձվում են ՀՀ դրամով, (բացառությամբ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից վճարումների դեպքերի, որոնք կարող են իրականացվել նաև ազատ փոխարկելի արտարժույթով (ԱՄՆ դոլար, Եվրո), ինչպես նաև ռուսական ռուբլով)՝ Բանկի կողմից ծառայությունը մատուցելու պահին, բացառությամբ այն սակագների, որոնց գանձումը նախատեսվում է կատարել ամսական կտրվածքով: Ամսական կտրվածքով սահմանված սակագների գանձումը կատարվում է հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10 օրացուցային օրվա ընթացքում: : Ընդ որում՝ ռեեստրի վարման ծառայության մատուցման առաջին և վերջին ամսվա միջնորդավճարները գանձվում են ամսվա փաստացի օրերի հաշվարկով: Բացառությամբ, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքվում է Հաշվի Օպերատորի փոփոխության հետևանքով, ապա ռեեստրի վարման ծառայության մատուցման ընթացիկ ամսվա համար գանձվում է միջնորդավճարի հաշվարկված մեծությունը՝ համաձայն Սակագների՝ ներառելով Կենտրոնական Դեպոզիտարիայի սակագինը ընթացիկ ամբողջ ամսվա համար:

1.2. Հաշվետիրոջ (այդ թվում՝ անվանատիրոջ) հաշիվներում առկա պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական Բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի նկատմամբ արժեթղթերի պահպանման սակագինը չի հաշվարկվում: Անվանատիրոջ մոտ նշված անձանց պատկանող արժեթղթերի առկայության դեպքում վերջինս Բանկի միջնորդությամբ դրանց մնացորդների մասին Սի-Բի-Էյ-Նեթ ցանցով տեղեկացնում է Կենտրոնական դեպոզիտարիային՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ավարտը:

1.3. Եթե ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվում է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով,

և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:

1.4. Սակագներում օտարերկրյա արժեթղթերով գործարքների սպասարկման ծառայությունների մասով ԱԱՀ-ն ներառված չէ և ենթակա է գանձման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.5. Սահմանված ժամկետներում չվճարվելու դեպքում Սակագները անակցեպտ կարգով գանձվում են Բանկում հաճախորդի հաշիվներից: ՀՀ դրամով հաշիվներին բավարար միջոցներ չլինելու դեպքում, Բանկն իրավունք ունի համապատասխան գումարը կամ դրա մի մասը փոխարկել հաճախորդի արտարժույթով հաշիվներում առկա միջոցներից՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առքի փոխարժեքը:

1.6. Բանկն կասեցնում է սույն կանոններով նախատեսված ծառայությունների մատուցումն իր միջնորդությամբ ռեեստրի վարման և պահառության/ենթապահառության պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող թողարկողներին և հաշվետերերին, եթե վերջիններս Բանկի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց երեք ամիս վճարման ենթակա միջնորդավճարների պարտավորություն: Կենտրոնական դեպոզիտարիան և/կամ Բանկն իրավունք ունեն վերսկսել թողարկողին և հաշվետիրոջը ծառայությունների մատուցումն, այդ թվում վերակնքել ռեեստրի վարման պայմանագիրը միայն ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման համար նախատեսված պարտադիր վճարը և ժամկետանց պարտավորությունն ամբողջությամբ վճարելուց հետո հետևյալ դեպքերում.

1.6.1. Եթե ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս վերակնքված չէ, ապա ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը աբողջովին վճարվում է Կենտրոնական դեպոզիտարիային անմիջականորեն կամ Բանկի միջնորդությամբ: Ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը (Գ1) հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝ Գ1=ԺՊ+ՊՎՎ որտեղ՝ ԺՊ-ն կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ գումարն է՝ իսկ ՊՎՎ–ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է ՀԴ*Օ/365 բանաձևով, որտեղ Օ-ն կասեցման օրերի քանակն է, իսկ ՀԴ-ն հիմնական դրույքաչափ, որը կազմում է՝

ա. 80,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 1-ից մինչև 99,

բ. 160,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 100-ից մինչև 499,

գ. 300,000 ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 500 և ավելի:

Ընդ որում՝ ռեեստրի վարման պայմանագիրը Հաշվի օպերատորի միջնորդությամբ դեռևս չվերակնքած թողարկողների նկատմամբ հաշվարկվող ՊՎՎ-ի առավելագույն գումարը չի կարող գերազանցել սույն ենթակետի ա. մասում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 150,000 ՀՀ դրամը, բ. մասում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 300,000 ՀՀ դրամը, գ. մասում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 550,000 ՀՀ դրամը:

1.6.2. Եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է Բանկի կողմից, ապա ռեեստրի վարման պայմանագրի համար նախատեսված վերսկսման վճարը (Գ2) հաշվարկվում է Գ2=ԺՊ+ՊՎՎ բանաձևի համաձայն որտեղ՝ ԺՊ-ն կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ գումարն է, ՊՎՎ–ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է ՀԴ*Օ/365 բանաձևով, որտեղ Օ-ն կասեցման օրերի քանակն է, իսկ ՀԴ-ն՝ հիմնական դրույքաչափը, որը ռեեստրի վարման ծառայությունների մատուցումը մինչև 01/10/2020թ. կասեցված ընկերությունների համարհաշվարկվում է 1.6.1 կետի ա., բ., գ. մասերում նշված հիմնական դրույքաչափերին ավելացնելով համապատասխանաբար 20,000 ՀՀ դրամ, 40,000 ՀՀ դրամ և 50,000 ՀՀ դրամ, իսկ ռեեստրի վարման ծառայությունները 01/10/2020թ.–ից հետո կասեցված ընկերությունների համար կասեցման օրվանից սկսած առաջին 90 օրերի ընթացքում հաշվառվում է 1.6.1 կետի ա., բ., գ. մասերում նշված հիմնական դրույքաչափերով, իսկ 91-րդ օրվանից սկսած հաշվարկվում է 1.6.1 կետի ա., բ., գ. մասերում նշված հիմնական դրույքաչափերին ավելացնելով համապատասխանաբար 20,000 ՀՀ դրամ, 40,000 ՀՀ դրամ և 50,000 ՀՀ դրամ:

1.6.3. Եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է Բանկի կողմից, ապա Գ3=ԺՊ+ՊՎՎ բանաձևի համաձայն հաշվարկված ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը (Գ3) Բանկին վճարելուց հետո, որտեղ՝ ԺՊ-ն կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարն է՝ գումարած հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար, ՊՎՎն–ն պայմանագրի վերսկսման վճարն է, որը հաշվարկվում է ՀԴ*Օ/365 բանաձևով, որտեղ ՀԴ-ն հիմնական դրույքաչափն է, որը կազմում է վերսկսման պահին հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի 0.009 %-ը, Օ-ն կասեցման օրերի քանակն է:

1.6.4. 1.6.1.-1.63. ենթակետերով վճարման ենթակա գումարի մասնակի վճարման դեպքում առաջին հերթին մարման է ենթակա ժամկետանց պարտավորությունների գումարը (ԺՊ), այնուհետև՝ պայմանագրի վերսկսման վճարը (ՊՎՎ):

1.7. 1.6 կետով նախատեսված կարգով կասեցման ժամանակահատվածում թողարկողի կամ հաշվետիրոջ կողմից օրենքով սահմանված դեպքերում պայմանագիրը լուծելու դեպքում.

1.7.1. Թողարկողը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը Բանկին վճարել 1.6.2. ենթակետի համաձայն հաշվարկված գումարը և մարել Բանկի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է.

1.7.2. Հաշվետերը պարտավոր է մինչև պայմանագրի լուծման պահը Բանկին վճարել 1.6.3. ենթակետի համաձայն հաշվարկված գումարը և մարել Բանկի հանդեպ ունեցած բոլոր ժամկետանց պարտավորությունները՝ այն դեպքում, եթե արժեթղթերի պահառության պայմանագիրը վերակնքված է:

1.8. Կենտրոնական դեպոզիտարիայի ծառայություններից օգտվող Թողարկողները Կենտրոնական դեպոզիտարիայի հանդեպ ունեցած իրենց պարտավորությունների մասին կարող են տեղեկանալ Կենտրոնական դեպոզիտարիայի պաշտոնական ինտերնետային կայքից:

1.9. Հիմք ընդունելով Բանկի և հաճախորդների միջև երկարատև համագործակցությունը, հաճախորդի գործարքների ծավալները և այլ հանգամանքներ, Բանկի իրավասու մարմնի կողմից համապատասխան չափանիշներին բավարարող հաճախորդների համար կարող են կիրառվել արտոնյալ սակագներ և դրույթներ, որոնցից կարող են օգտվել այդ չափանիշներին բավարարող բոլոր հաճախորդները:

1.10. Բանկը կարող է գործող Սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է հաճախորդներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի կողմից սահմանված պահից, սակայն դրանց մասին հաճախորդներին ծանուցելու օրվանից ոչ շուտ:

1.11. Հաճախորդի կողմից վճարման ենթակա գումարը ներառում է Կենտրոնական Դեպոզիտարիայի սակագինը և Բանկի միջնորդավճարը:

2. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Ծառայության տեսակը	Միավորը	Սակագինը բանկի հաշվետեր հաճախորդների համար	Սակագինը բանկի հաշվետեր չհանդիսացող հաճախորդների համար[1]
Թողարկողի արժեթղթերի ռեեստրի սկզբնական տվյալների մուտքագրում ծրագրային համակարգում				
1.	Թողարկողի վերաբերյալ տվյալների գրանցում ծրագրային համակարգում	-	անվճար	
2.	Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային համակարգում	-	անվճար	
3.	Բաժնային արժեթղթերի (փայերի) հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	6 000 ՀՀ դրամ/1-ից մինչև 49-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	8 000 ՀՀ դրամ/1-ից մինչև 49-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
			8 000 ՀՀ դրամ/50-ից մինչև 99-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	10 000 ՀՀ դրամ/50-ից մինչև 99-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
			12 000 ՀՀ դրամ/ 100-ից մինչև 199-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	15 000 ՀՀ դրամ/ 100-ից մինչև 199-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
			18 000 ՀՀ դրամ/ 200-ից մինչև 499-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	22 000 ՀՀ դրամ/ 200-ից մինչև 499-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ

[1] Ոչ հաշվետեր հաճախորդների համար սահմանված սակագները կիրառվում են միայն 01.10.2020թ.-ից հետո կնքված ռեեստրի վարման պայմանագրերի դեպքում:

		(ամսական)[2]	20 000 ՀՀ դրամ/ 500-ից մինչև 999-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	25 000 ՀՀ դրամ/ 500-ից մինչև 999-ը ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
			40 000 ՀՀ դրամ/ 1000 և ավելի՝ ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ	50 000 ՀՀ դրամ/ 1000 և ավելի՝ ներառյալ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ
Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)[3]				
4.	Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Տեղաբաշխված պարտատոմսերի յուրաքանչյուր դասի համար ընդհանուր անվանական արժեք (ամսական)	0.004%, առավելագույնը 62 000 ՀՀ դրամ	0.008%, առավելագույնը 62 000 ՀՀ դրամ
Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում				
5.	Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար/մեկ փոխանցում	6000 ՀՀ դրամ	
Տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայություններ[4]				

[2] Արժեթղթերի յուրաքանչյուր դասի տեղաբաշխված արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում առկա հաշիվների քանակը հաշվարկվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ:

[3] Արտարժույթով արտահայտված անվանական արժեք ունեցող պարտատոմսերի հաշվառման (արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման և պահպանման) սակագինը հաշվարկվում է ՀՀ դրամով՝ ամսվա վերջին օրվա համար ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված փոխարժեքի հաշվարկով:

[4] Բացառություն են կազմում կարգավորվող շուկայի միջոցով տեղաբաշխված, ինչպես նաև վերակազմակերպման հիմքով արժեթղթերի փոխարկումն ապահովելու համար լրացուցիչ տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառման դեպքերի, ընդ որում՝ արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման արդյունքում տեղաբաշխված արժեթղթերի գրանցման հաշվառմամբ պայմանավորված ծառայությունների սակագինը տեղաբաշխման գործընթացի վերջում վերահաշվարկվում է ընդհանուր անվանական ծավալի սկզբունքով:

Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում (բաժնետոմսերի տեղաբաշխում բացառությամբ բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)				
6.	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք (փայերի դեպքում՝ փայերի շուկայական/հաշվարկային արժեքը)	0.1%, նվազագույնը 20 000 ՀՀ դրամ, առավելագույնը 2 500 000 ՀՀ դրամ	0.2%, նվազագույնը 30 000 ՀՀ դրամ, առավելագույնը 3 000 000 ՀՀ դրամ
Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում (պարտատոմսերի տեղաբաշխում՝ բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման դեպքերի)				
7.	Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	0.008%, նվազագույնը 20 000 ՀՀ դրամ, առավելագույնը 2 250 000 ՀՀ դրամ	0.01%, նվազագույնը 30 000 ՀՀ դրամ, առավելագույնը 2 500 000 ՀՀ դրամ
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում				
8.	Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	0.1% նվազագույնը 20 000 ՀՀ դրամ առավելագույնը 1 000 000 ՀՀ դրամ	0.2% նվազագույնը 30 000 ՀՀ դրամ առավելագույնը 1 200 000 ՀՀ դրամ
Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում				
9.	Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	0.008% նվազագույնը 20 000 ՀՀ դրամ առավելագույնը 400 000 ՀՀ դրամ	0.01% նվազագույնը 30 000 ՀՀ դրամ առավելագույնը 500 000 ՀՀ դրամ
Թողարկողի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում [5]				

[5] ներառում է արժեթղթերի փոխարկումը (այդ թվում՝ բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման, արժեթղթերի համախմբման (կոնսոլիդացիա) և բաժանման հիմքով), թողարկողի որոշմամբ մեկ դասի (տեսակի) արժեթղթերը մեկ այլ դասի (տեսակի) արժեթղթերի փոխարկումը, վերակազմակերպման (բացառությամբ վերակազմավորման այն դեպքի, երբ արժեթղթերի քանակի և անվանական արժեքի փոփոխություն տեղի չի ունենում) արդյունքում արժեթղթերի փոխարկումը, թողարկողի՝ իր կողմից թողարկված արժեթղթերի (բացառությամբ պարտատոմսերի) ձեռքբերումը, հետգնումը և մարումը կամ չեղյալ համարումը: Ընդ որում՝ փոխարկման դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկման արդյունքում գրանցվող արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը, բացառությամբ բաժանման և առանձնացման ձևով վերակազմակերպման հիմքով բաժնետոմսերի փոխարկման դեպքերի: Բաժանման և առանձնացման ձևով

10.	Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի)	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	0.1% նվազագույնը 30 000 ՀՀ դրամ առավելագույնը 2 700 000 ՀՀ դրամ	0.2% նվազագույնը 50 000 ՀՀ դրամ առավելագույնը 3 000 000 ՀՀ դրամ
11.	Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	Կորպորատիվ գործողության առարկա՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի ընդհանուր ծավալ	0.01% նվազագույնը 5 000 ՀՀ դրամ առավելագույնը 300 000 ՀՀ դրամ	0.02% նվազագույնը 10 000 ՀՀ դրամ առավելագույնը 400 000 ՀՀ դրամ
12.	Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում (փակում)	հաշիվ	Անվճար	
Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում				
13.	Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում	ցուցակ	2 500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	5000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի /առանց հիմքերի/ տրամադրում				
14.	Թղթային / էլեկտրոնային	Տեղեկանք	5 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	10 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների ՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով)				
15.	Էլեկտրոնային	Տեղեկանք	10 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	15 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
	Թղթային		15 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	20 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)				
16.	Թղթային / էլեկտրոնային	Տեղեկանք	8 000 ՀՀդրամ (ներառյալ ԱԱՀ)	12 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)

վերակազմակերպման պայմանավորված կորպորատիվ գործողության դեպքում սակագնի հաշվարկման հիմք է ընդունվում փոխարկվող, արժեթղթերի ընդհանուր անվանական ծավալը):

Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ տեղեկանքի տրամադրում (հիմքերով)				
17.	Էլեկտրոնային	Տեղեկանք	15 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	20 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
	Թղթային		20 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	25 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Թողարկողի մասին տվյալների փոփոխությունների գրանցում Համակարգում[6]				
18.	Տվյալների փոփոխության մուտքագրում համակարգ	-	Անվճար	
Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում				
19.	Թողարկողի հանձնարարագրի հիման վրա շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար (յուրաքանչյուր գործընթացի համար)	0,2%, նվազագույնը՝ 30 000 ՀՀ դրամ	0,4%, նվազագույնը՝ 60 000 ՀՀ դրամ
Թողարկողի հանձնարարագրի հիման վրա պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում				
20.	Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված/բաշխված դրամական միջոցների գումարը/յուրաքանչյուր գործընթացի համար	0,02%, նվազագույնը՝ 20 000 ՀՀ դրամ	0,04%, նվազագույնը՝ 40 000 ՀՀ դրամ
Ծանուցում թողարկողին արժեթղթերի (փայերի) գործառնությունների մասին (արժեթղթերի (փայերի) փոխանցման հանձնարարականների և արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ)				
21.	Ծանուցում	տարեկան	225 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	450 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում				
22.	Հսկողության իրականացում	տարեկան	750 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)	1 000 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)

[6] Թողարկողի մասին տվյալների փոփոխությունը ներառում է թողարկողի գտնվելու կամ գործունեության վայրի, բաժնետիրական ընկերությունների տեսակի, տնօրենի փոփոխության, ընկերության անվանման փոփոխության կամ արժեթղթերի մասին տեղեկությունների փոփոխության (արժեթղթերի փաստաթղթային ձևի փոփոխությունը ոչ փաստաթղթայինի և հակառակը) գրանցում Համակարգում:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Արժեթղթերի (փայերի) հաշվի բացում, փոփոխություն, հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում և փակում			
1.	Արժեթղթերի հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	անվճար
2.	Արժեթղթերի հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Արժեթղթերի հաշիվ	անվճար
3.	Հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեղթերի) պահպանում[7]	Յուրաքանչյուր օրվա վերջին հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	0.0007%, նվազագույնը՝ 100 ՀՀ դրամ
4.	Արժեթղթերի հաշվի փակում	-	անվճար
Կարգավորվող շուկայից դուրս արժեթղթերի փոխանցմամբ պայմանավորված ծառայություններ (փոխանցման սակագինը չի գանձվում այն դեպքերում, երբ արժեթղթեր փոխանցող/ստացող կողմ է հանդիսանում ՀՀ Կենտրոնական Բանկը)			
Բաժնետոմսերի (փայերի) հասարակ փոխանցում ցանկացած հիմքով, ներառյալ "Ազատ առաքում՝ համաձայնությամբ" (վճարում է փոխանցող կողմը (կամ շահագրգիռ կողմը) սկզբունքով[8]			

[7] Այս ծառայության դիմաց սակագնի հաշվարկումը սկսվում է բանկի կողմից հաշվետիրոջ հաշվի բացման/վերաբացման պահից

[8] Ներառում է բաժնետոմսերով առքուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի մասնավորեցման, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա, (երբ տվյալ վճռով պարտապանը Կենտրոնական դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

5.	Բաժնետոմսերի (փայերի) փոխանցում, (ներառյալ՝ ազատ առաքումը՝ համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	0.1%, նվազագույնը 1000 ՀՀ դրամ, առավելագույնը 2 500 000 ՀՀ դրամ
Պարտատոմսերի հասարակ փոխանցում ցանկացած հիմքով ներառյալ "Ազատ առաքում՝ համաձայնությամբ" սկզբունքով (վճարում է փոխանցող կողմը (կամ շահագրգիռ կողմը)[9]			
6.	Պարտատոմսերի փոխանցում (ներառյալ ազատ առաքում՝համաձայնությամբ)	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	0.01%, նվազագույնը 1000 ՀՀ դրամ, առավելագույնը 360 000 ՀՀ դրամ
Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին			
7.	Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքների կնքման արդյունքում արժեթղթերի փոխանցում	Հանձնարարագիր (վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը)	8 000 ՀՀ դրամ
Պորտֆելի փոխանցում՝ մեկ հաշվի օպերատորի մոտ բացված հաշվետիրոջ հաշվից այլ հաշվի օպերատորի մոտ բացված տվյալ հաշվետիրոջ հաշվին՝ արժեթղթերի հաշվում առկա ամբողջ մնացորդի փոխանցում			
8.	Պորտֆելի փոխանցում	Հանձնարարագիր (վճարումը իրականացնում է փոխանցող կողմը)	6 000 ՀՀ դրամ
Բաժնետոմսերի փոխանցում "Առաքում վճարման դիմաց" սկզբունքով ցանկացած հիմքով			
9.	Բաժնետոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք (վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը)	0.15%, նվազագույնը 2 000 ՀՀ դրամ, առավելագույնը 2 500 000 ՀՀ դրամ
Պարտատոմսերի փոխանցում "Առաքում վճարման դիմաց" սկզբունքով ցանկացած հիմքով			

[9] Ներառում է պարտատոմսերով առքուվաճառքի, նվիրատվության, ժառանգության, դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա (երբ տվյալ վճռով պարտապանը Կենտրոնական դեպոզիտարիան չէ), ինչպես նաև ցանկացած այլ հիմքով արժեթղթերի փոխանցում արժեթղթերի մեկ հաշվից մյուսին:

10.	Պարտատոմսերի DVP փոխանցում	Գործարքի առարկա հանդիսացող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք (վճարումը իրականացնում է յուրաքանչյուր կողմը)	0.015%, նվազագույնը 2000 ՀՀ դրամ, առավելագույնը 270 000 ՀՀ դրամ
Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացում			
11.	Արժեթղթերի գրավի արտադատական կարգով իրացում	Իրացվող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք (վճարումը իրականացնում է գրավառուն)	0.3%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ, առավելագույնը 400 000 ՀՀ դրամ
Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրով տվյալ հաշվետիրոջ արժեթղթերի հաշվում արժեթղթերի գրավադրում			
12.	Գրավի իրավունքի գրանցում	Գրավի առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք	0.1%, նվազագույնը 2 000 ՀՀ դրամ, առավելագույնը 2 250 000 ՀՀ դրամ
Հաշվետիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարականի հիման վրա արժեթղթերի կամ արժեթղթերի հաշվի սառեցում			
13.	Սառեցում	Սառեցված արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք/վճարումը իրականացնում է հաշվետերը	0.1% նվազագույնը 2 000 ՀՀ դրամ առավելագույնը 2 250 000 ՀՀ դրամ
Կարգավորվող շուկայում կնքված գործարքների արդյունքում արժեթղթերի առևտրային արգելադրում			
14.	Առևտրային արգելադրում	-	Անվճար
Բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովում քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում արգելադրված բաժնետոմսերի համար			
15.	Քվեարկելու իրավունքի ժամանակավոր սահմանափակում	Քվեարկելու իրավունքը սահմանափակված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	0.4%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ
Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում			

16.	Գրավի, սառեցման, առևտրային արգելադրման և այլ սահմանափակումների դադարեցում	Գրավադրված, սառեցված, առևտրային նպատակով արգելադրված և այլ սահմանափակումների ենթարկված արժեթղթերի ընդհանուր անվանական արժեք	Անվճար
Հաշվետիրոջ հարցման հիման վրա Բանկի մոտ բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից (այդ թվում՝ ռեեստրից) քաղվածքի կամ արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում (առանց հիմք հանդիսացող փաստաթղթերի)			
17.	Արժեթղթերի հաշվից քաղվածքի տրամադրում (հաշվում առկա միայն մեկ դասի արժեթղթի մասով (ռեեստրից քաղվածք))	քաղվածք	500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
18.	Արժեթղթերի հաշվի մնացորդի վերաբերյալ հաշվետվության տրամադրում	հաշվետվություն	500 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
19.	Արժեթղթերի հաշվով կատարված գործառնությունների (այդ թվում՝ արժեթղթերի շարժի) մասին տեղեկանքի տրամադրում	տեղեկանք	2 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
20.	Հաշվետվություն գրավառուի արժեթղթերի հաշվում գրանցված գրավի իրավունքների վերաբերյալ	հաշվետվություն	2 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Հաշվետիրոջ հարցման հիման վրա Բանկի մոտ բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների (բացառությամբ գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների) վերաբերյալ ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից տեղեկանքի տրամադրում (առանց հիմքերի)			
21.	Թղթային / էլեկտրոնային	տեղեկանք	3 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Հաշվետիրոջ հարցման հիման վրա Բանկի մոտ բացված (վերաբացված) արժեթղթերի հաշվից այլ տեղեկությունների (բացառությամբ գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների) վերաբերյալ ռեեստրից կամ արժեթղթերի հաշվից տեղեկանքի տրամադրում (հիմքերով)			
22.	Էլեկտրոնային եղանակով	տեղեկանք	5 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
23.	Թղթային եղանակով	տեղեկանք	8 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)

Հաշվի օպերատոր չհանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում			
24.	Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	250 000 ՀՀ դրամ
25.	Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
26.	Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեղթերի) պահպանում	Յուրաքանչյուր օրվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	0.0007%, նվազագույնը 1 000 ՀՀ դրամ
Հաշվի օպերատոր հանդիսացող անձի համար անվանատիրոջ հաշվի բացում, փոփոխություն և հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ օտարերկրյա պահառուին միջոցով հաշվառվող արժեթղթերի) պահպանում			
27.	Անվանատիրոջ հաշվի բացում	Արժեթղթերի հաշիվ	50 000 ՀՀ դրամ
28.	Անվանատիրոջ հաշվում ներառված տեղեկությունների փոփոխության գրանցում	Արժեթղթերի հաշիվ	Անվճար
29.	Անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի բացառությամբ օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեղթերի) պահպանում	Յուրաքանչյուր ամսվա վերջին անվանատիրոջ հաշվում առկա արժեթղթերի (բացառությամբ ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի) մնացորդների անվանական (փայերի դեպքում՝ հաշվարկային) արժեք	0.0007% նվազագույնը 1 000 ՀՀ դրամ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԱՀԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ[10]			
Արժեթղթերի պահպանման ծառայություն[11]			**Սակագին**
1.	Բաժնային արժեթղթերի (այդ թվում՝ ֆոնդի փայերի) պահպանում	Սեփականատիրոջ (անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ/ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին, նվազագույնը 3,000 ՀՀ դրամ
2.	Պարտքային արժեթղթերի պահպանում (բացառությամբ ՀՀ անունից թողարկված եվրոպարտատոմսերի)	Սեփականատիրոջ (անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ/ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին, նվազագույնը 3,000 ՀՀ դրամ
3.	ՀՀ անունից թողարկված եվրոպարտատոմսերի պահպանում	Սեփականատիրոջ (անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ/ամսական (արժեթղթերի մնացորդի օրական հաշվարկով)	0.0025%, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ
Կորպորատիվ գործողություններ			
4.	Արժեթղթերից ստացվող եկամուտների մուտքագրում հաշվին	Սեփականատիրոջ (անվանատիրոջ) հաշվում առկա արժեթղթերի ընդհանուր ծավալ/ամսական (արժեթղթերի մնացորդի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին

[10] Օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահպանման և այդ արժեթղթերով գործարքների սպասարկման ծառայությունների շրջանակը կարող է տարբերվել՝ կախված օտարերկրյա պահառուից: Օտարերկրյա քաղաքացիների համար օտարերկրյա պահառուի միջոցով հաշվառվող արժեթղթերի պահառուական ծառայությունները սահմանվում են բանակցությունների հիման վրա:

[11] ՀՀ ԿԲ հետ կնքված ռեպո/հակադարձ ռեպո գործարքի արդյունքում ՀՀ ԿԲ արժեթղթերի հաշվում առկա արժեթղթերի պահպանման սակագինը հաշվարկվում է արժեթղթերը փոխանցած կողմի նկատմամբ:

		օրական հաշվարկով)	
5.	Արժեթղթերի մարում	Ըստ յուրաքանչյուր գործառնության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
6.	Շահութաբաժինների վճարում	Ըստ յուրաքանչյուր գործառնության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
7.	Այլ պարտադիր գործողություններ	Ըստ յուրաքանչյուր գործառնության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
8.	Ոչ պարտադիր գործողություններ	Ըստ յուրաքանչյուր գործառնության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
9.	Դայթերի առք և վաճառք	Գործարքի առարկա արժեթղթերի ծավալ	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
10.	Հարկերի պահում, հարկային հավատագրերի մշակում, հարկերի վերադարձման, ճշգրտման գործողություններ	Ըստ յուրաքանչյուր դեպքի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
11.	Ծանուցումների ստացում	Ըստ յուրաքանչյուր ժողովի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
12.	Օրակարգի ստացում	Ըստ յուրաքանչյուր ժողովի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
13.	Մուտքի քարտի պատվիրում	Ըստ յուրաքանչյուր ժողովի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
14.	Քվեարկության հանձնարարականի կատարում	Ըստ յուրաքանչյուր ժողովի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
Արժեթղթերով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ (Վերջնահաշվարկի ենթակա, սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար)			
15.	Պարտքային, բաժնային արժեթղթերով և ֆոնդի փայերով վերջնահաշվարկի հանձնարարականի կատարում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
16.	Սխալ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
17.	Արժեթղթերի ֆիզիկական առաքման կամ ստացման հետ կապված ծախսեր (ներառյալ ապահովագրությունը)	Ըստ յուրաքանչյուր դեպքի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
18.	Վերջնահաշվարկի խմբային հանձնարարականի (group matching) կատարում	Ըստ յուրաքանչյուր գործարքի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին

Դրամական միջոցներով վերջնահաշվարկի կատարման ծառայություններ (Վերջնահաշվարկի ենթակա, սակայն դեռևս չկատարված հանձնարարականները հանձնարարականի մուտքագրումից հետո 45-րդ օրը ենթակա են ավտոմատ չեղարկման, որի համար գանձվում է վերջնահաշվարկի կատարման վճարի չափով գումար)			
19.	Դրամական միջոցների մուտքագրման և ելքագրման հանձնարարականի կատարում (ներառյալ՝ preadvice հանձնարարականները)	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
20.	Դրամական միջոցներով գործառնություններ առանց հանձնարարականի	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
21.	Սխալ ֆորմատավորված կամ ժամկետից ուշ ներկայացված հանձնարարականի մշակում	Ըստ յուրաքանչյուր հանձնարարականի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
Հաշվետվությունների տրամադրում			
22.	Կորպորատիվ գործողությունների ծանուցում	Ըստ յուրաքանչյուր ծանուցում	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
23.	Կորպորատիվ գործողությունների հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
24.	Ամսական ստացվելիք տոկոսագումարների տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
25.	Հաշվում առկա արժեթղթերի վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
26.	Դրամական միջոցների մնացորդի վերաբերյալ հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
27.	Դրամական միջոցների վերաբերյալ այլ հաշվետվություններ	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
28.	Գործառնությունների վերաբերյալ տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
29.	Սպասվող գործառնությունների տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
30.	Վերջնահաշվարկի հաստատման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
31.	Արժեթղթերով վարկավորման հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
32.	Կորպորատիվ գործողությունների ընդհանրական հաշվետվություն	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին

33	Հաշվում առկա արժեթղթերի բացվածքի տրամադրում՝ ըստ շուկաների	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
34.	Հաշվետվությունների ուղարկում փոստով կամ էլ. փոստով	Ըստ յուրաքանչյուր հաշվետվության	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին
35.	Հանձնարարականի հաստատման տեղեկանք	Ըստ յուրաքանչյուր տեղեկանքի	Կենտրոնական դեպոզիտարիայի սակագին + 50% հավելագին

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ներդրումային ֆոնդի փայերի տեղաբաշխման նպատակով գնման կամ մարման նպատակով հետգնման հայտի ընդունում և գրանցում (սակագինը գանձվում է հայտը ներկայացրած անձից)			
1.	Փայերի տեղաբաշխման նպատակով գնման հայտի ընդունում և գրանցում	Յուրաքանչյուր հայտ	1 000 ՀՀ դրամ
2.	Փայերի մարման նպատակով հետգնման հայտի ընդունում և գրանցում	Յուրաքանչյուր հայտ	1 000 ՀՀ դրամ